ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՂԱՍԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 6-ՐԴ ԵՎ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 1 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ա. Դանիելյանի (ներկայացուցիչ Զ. Ապրեսյան),

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Աղասի Դանիելյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Օրենսգրքի «Դատական ակտին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 6-րդ հոդվածը սահմանում է.

«*1. Դատական ակտը պետք է լինի օրինական:*

2. Դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով»:

Օրենսգրքի «Դատական ակտի պատճառաբանվածությունը» վերտառությամբ 9-րդ հոդվածը սահմանում է.

«*1. Դատական ակտը պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:*

2. Եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով, ապա դատարանը պարտավոր է դատական ակտում անդրադառնալ գործին մասնակցող անձանց կողմից դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված փաստարկները կամ իրավական հիմքերն առերևույթ սխալ են, կամ կիրառման է ենթակա հայցային վաղեմության կամ որևէ դատավարական ժամկետ, և այդ փաստարկներին, իրավական հիմքերին կամ ապացույցներին անդրադառնալն անհրաժեշտ չէ տվյալ դատական ակտի կայացման համար:

3. Դատական ակտը չի կարող պատճառաբանվել ենթադրություններով՝ բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքում ամրագրված կանխավարկածներով:

4. Դատական ակտը չի կարող պատճառաբանվել վերացական դատողություններով: Դատարանը չի կարող փաստել, որ գործին մասնակցող որևէ անձ չի

կատարել որևէ փաստական հանգամանք ապացուցելու պարտականությունը՝ առանց ցույց տալու, թե տվյալ փաստական հանգամանքն ինչ պատճառով չի կարող ապացուցված համարվել գործում առկա ապացույցներով:

5. Այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ծագել է վեճ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ, ապա դատական ակտում պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը»:

Վիճարկվող դրույթներն Օրենսգրքի ընդունումից ի վեր փոփոխությունների կամ լրացումների չեն ենթարկվել:

Գործի քննության առիթը Աղասի Դանիելյանի (այսուհետ՝ դիմող)՝ 2021 թվականի օգոստոսի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴԱՈ-18 որոշմամբ Սահմանադրական դատարանը մասամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 27-րդ հոդվածի 3-րդ մասի, 381-րդ հոդվածի 7-րդ մասի և 397-րդ հոդվածի մասով, կարճել է սույն գործի վարույթը:

Ուսումնասիրելով դիմումը, դրան կից ներկայացված փաստաթղթերը, Դատական դեպարտամենտից ստացված թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործի նյութերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Գործի դատավարական նախապատմությունը

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Աղասի Շավարշի Դանիելյանի ընդդեմ համապատասխանողների, հայցվորի կողմում հանդես եկող և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի, պատասխանողների կողմում հանդես եկող և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու, իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելու, գումար և դրա

նկատմամբ հաշվարկվող տոկոսներ բռնագանձելու, բռնագանձումը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի վրա տարածելու, դրա անբավարարության դեպքում՝ համապատասխանողներին պատկանող այլ գույքի վրա տարածելու վերաբերյալ պահանջների մասին, 2020 թվականի ապրիլի 10-ին վճռել է հայցը բավարարել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 29-ին որոշել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործով 2020 թվականի ապրիլի 10-ի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը մերժել:

Վճռաբեկ դատարանը 2021 թվականի փետրվարի 17-ին որոշել է թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 29-ի որոշման դեմ Աղասի Դանիելյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակության հիմքի առկայության մասով՝ վճռաբեկ բողոքում նշված փաստարկների հակիրճ շարադրանքից և Օրենսգրքի համապատասխան դրույթների մեջբերումից հետո նշելով. «*Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև բողոք բերած անձը որպես բողոքը վարույթ ընդունելու հիմք մատնանշել է օրենքի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալու հանգամանքը, սակայն բողոքում ներկայացված հիմնավորումը Վճռաբեկ դատարանը գտնում է ոչ բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված պայմանի առկայությունը հիմնավորված համարելու, ուստիև այդ հիմքով բողոքը վարույթ ընդունելու համար*»: Նույն որոշմամբ վճռաբեկ բողոքում մարդու իրավունքների և ազատությունների առերևույթ խախտման հիմքի առկայության մասով Վճռաբեկ դատարանը նշել է. «*Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած հիմնավորումները բավարար չեն բողոքարկվող դատական ակտում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայությունն ու այդ խախտմամբ արդարադատության բուն էության խաթարումը հիմնավորված համարելու համար*»:

2. Դիմողի դիրքորոշումը.

Դիմողը, սույն սահմանադրահիրավական վեճին վերաբերող մասով ներկայացնելով թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործի դատավարության պատմության հիման վրա իր փաստարկները, նշում է, որ Վճռաբեկ դատարանը 2021 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ մերժել է ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը՝ առանց նշելու նման եզրահանգման համար հիմք հանդիսացած դատողությունների ընթացքը՝ ըստ էության, չպատճառաբանելով հիշատակված որոշումը: Ըստ Դիմողի՝ Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը չպատճառաբանելու պրակտիկան ակնհայտորեն սահմանափակում է անձի արդար դատաքննության իրավունքը:

3. Պատասխանողի դիրքորոշումը

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ պատասխանող), վկայակոչելով Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերաբերելի որոշումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ խնդրո առարկա հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշումները, առարկել է դիմումին այն բովանդակությամբ, որ դիմողը, ձևականորեն վիճարկելով Օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների սահմանադրականությունը, բարձրացնում է Վճռաբեկ դատարանի՝ խնդրո առարկա որոշման իրավաչափության հարցը, մինչդեռ դատական ակտի իրավաչափության գնահատումը ենթակա չէ Սահմանադրական դատարանին: Վերոգրյալի լույսի ներքո՝ պատասխանողը խնդրել է սույն գործի վարույթն ամբողջությամբ՝ ներառյալ նաև վիճարկվող իրավական նորմերի մասով, կարճել կամ վիճարկվող դրույթները ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

4. Սահմանադրահիրավական վեճի շրջանակները

Սահմանադրական դատարանը սույն սահմանադրահիրավական վեճը քննում է Օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածներով նախատեսված դատական ակտերի պատճառաբանվածության պահանջի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին

որոշումների մասով իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրության 63-րդ հոդվածին համապատասխանությունը ստուգելու շրջանակում, պարզելով՝

ա) արդյոք պատճառաբանված դատական ակտի իրավունքը ներառված է Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի ծավալում,

բ) եթե այո, ապա արդյո՞ք վիճարկվող իրավական նորմերը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների մասով համապատասխանում են այդ իրավունքի բովանդակությանը և, միաժամանակ, չե՞ն պարունակում արդյոք այդ իրավունքի սահմանափակումներ, իսկ նման սահմանափակումներ պարունակելու դեպքում արդյո՞ք իրավունքի այդ սահմանափակումների նպատակը սահմանադրական է, իսկ ընտրված միջոցը՝ պիտանի, անհրաժեշտ և համարժեք սահմանափակման նպատակին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը

5.1. 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, (...) արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք*»: 2005 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված փոփոխություններով Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում էր նույնաբովանդակ դրույթ (դատաքննության ողջամիտ տևողության պահանջի մասին լրացմամբ): 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված փոփոխություններով Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

Դատական ակտերի պատճառաբանվածության իրավական պահանջի նպատակների և այդ պահանջն անտեսելու հետևանքներին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձնելու լիազորությանը և դրա կիրառ-

մամբ կայացվող որոշմանն առնչվող վերլուծություններում 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, նշել է. «(...)*սույն գործով վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթը՝10-օրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը*»:

2010 թվականի հունիսի 15-ի ՍԴՈ-896 որոշմամբ անդրադառնալով դատական ակտերի պատճառաբանվածության պահանջին՝ Սահմանադրական դատարանը նշել է. «(...) *օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում*»:

5.2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) ներպետական դատարանների կողմից կայացված որոշումները չպատճառաբանելը ճանաչելով արդար դատական քննության իրավունքի խախտում, նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին

մասի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանություններ՝ կողմերի լսված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հանրային հսկողություն ապահովելու նպատակով (տե՛ս, օրինակ, *Սալովն ընդդեմ Ուկրաինայի* գործով (*Salov v. Ukraine*), թիվ 65518/01, § 89, ՄԻԵԴ 2005-VIII (քաղվածքներ), *Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի* (*García Ruiz v. Spain*) [ՄՊ], թիվ 30544/96, § 26, ՄԻԵԴ 1999-I):

Դատական ակտի պատճառաբանվածությունը ՄԻԵԴ-ը դիտարկել է որպես արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքի պահանջ: Այս պարտականությունը ներառում է առնվազն հստակ անդրադարձ այն հանգամանքներին և փաստարկներին, որոնք կարող են որոշիչ լինել տվյալ գործի համար (տես՝ *Ռուիզ Տորիխան ընդդեմ Իսպանիայի* գործով (*Ruiz Torija v. Spain*), 1994 թվականի դեկտեմբերի 9, § 29-30, Շարք A թիվ 303-A), *Հիգգինսը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* գործով (*Higgins and Others v. France*), 1998 թվականի փետրվարի 19, § 42-43, Վճիռների և որոշումների հաղորդումներ 1998-I): Ավելին, այն գործերով, որոնք կարող են առնչվել Կոնվենցիայով նախատեսված իրավունքներին, ՄԻԵԴ-ի մի շարք վճիռներով մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել նաև այն հարցը, թե որքանով են դատական ակտերում բերված պատճառաբանությունները եղել բովանդակալից, այլ ոչ՝ ձևական բնույթի (տես, *mutatis mutandis, Պարադիսոն և Կամպանելլին ընդդեմ Իտալիայի* գործով (Paradiso and Campanelli v. Italy) [ՄՊ], թիվ 25358/12, § 210, 2017 թվականի հունվարի 24)՝ դատական ակտի պատճառաբանվածության սկզբունքի պահպանված լինելու նկատմամբ իրականացնելով բովանդակային վերահսկողություն:

ՄԻԵԴ-ի վերը նշված մոտեցումները դատական ակտերի պատճառաբանվածության պահանջի ընդհանուր կանոններն են, որոնք բարձր (մասնավորապես՝ վճռաբեկ) դատարաններին վերաբերելի մասով մասնավորեցվել են ըստ այնմ, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը դատական ակտերը վերանայող դատարաններին չի պարտավորեցնում որոշումների պատճառաբանություններում արձագանքել կողմերի

ներկայացրած բոլոր փաստարկներին, և, օրինակ, այնպիսի իրավիճակներում, երբ որոշումը վերանայող դատարանները համաձայնում են բողոքարկվող որոշումը կայացրած դատարանների որոշմանը, ապա համապատասխան բողոքները մերժելու մասին որոշումներում ընդունելի են ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումների հաստատումները, որպես դատարանի պատճառաբանություն (տես, օրինակ՝ *Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի* գործով վերը նշված վճիռը, § 26, *Հելլն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով (*Helle v. Finland*), 1997 թվականի դեկտեմբերի 19, §§ 59-60, Վճիռների և որոշումների հաղորդումներ 1997-VIII):

Դատական ակտին առաջադրվող պատճառաբանվածության պահանջի կարևորությունն իր որոշումներում ընդգծել է նաև Միավորված ազգերի կազմակերպության միջազգային դատարանը՝ այն դիտարկելով որպես արդար դատաքննության հանրորեն ճանաչված բաղադրիչ և արդարադատության արդյունավետության չափանիշ (տես՝ Միավորված ազգերի կազմակերպության վարչական դատարանի թիվ 158 վճռի վերանայման գործով միջազգային դատարանի 1973 թվականի հուլիսի 12-ի Խորհրդատվական կարծիք, §§ 92, 95):

5.3. Սահմանադրական դատարանը, վերահաստատելով արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող դատական ակտի պատճառաբանվածության պահանջի մասին նախկինում արտահայտված դիրքորոշումները, գտնում է, որ Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի սույն բաղադրիչը դատական քննության որակի առաջնային չափանիշ է, իսկ դատական ակտի պատճառաբանության բացակայությունը կասկածի տակ է առնում դատարանի կողմից տվյալ դատական ակտի կայացմամբ արդարադատության նպատակին համահունչ գործունեությունը: Կոնկրետ գործով դատարանի կողմից կայացված դատական ակտի իրավաչափության գնահատման առաջնային չափանիշը, անկախ դատական ակտի նկատմամբ ձևավորված հանրային կարծիքից կամ կողմերի կամ հասարակության կամ դրա մի մասի վերաբերմունքից, տվյալ գործով փաստերի և իրավունքի հարցերի վերաբերյալ դատական ակտի հիմքում ընկած ողջամիտ և համոզիչ պատճառաբանությունն է: Ավելին, դատավարական կողմերի մրցակցող և հակասող շահերի բախման պայմաններում

ընթացող դատական վեճերում դատական ակտի պատճառաբանության բացակայությունը նման պատճառաբանության առկայության իրավական պահանջի պայմաններում կարող է սասանել կողմերի և հանրության վստահությունն առ այն, որ բացակայում են տվյալ դատական ակտը կանխորոշող այլ՝ արդարադատության նպատակների հետ չառնչվող պատճառներ:

Բացի դրանից, դատական ակտի պատճառաբանվածությունը կողմի համար այն արդյունավետորեն բողոքարկելու և նման բողոքարկման հաջողության գնահատականի հիմք է: Այս կապակցությամբ դատական ակտի բողոքարկման ներքո նկատի է առնվում ոչ միայն դատական ակտի եռաստիճան դատական համակարգում բողոքարկման հնարավորությունը՝ փաստերի գնահատման կամ իրավունքի նորմերի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ, այլ նաև դատական ակտի պատճառաբանության մեջ վկայակոչված իրավական նորմերի սահմանադրականության ստուգման հնարավորությունը նման իրավունքն ունեցող անձի՝ Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումով, ինչպես նաև Սահմանադրության 61-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան միջազգային համապատասխան մարմիններ ներկայացվող բողոքին:

Միաժամանակ, դատական ակտի պատճառաբանվածության պահանջն ուղղված է դատարանների կողմից նույնանման գործերով ձևավորվող պրակտիկայի հստակ ուղենիշների ամրագրմանը, որի նպատակն է ապահովել իրավունքի մեկնաբանության և կիրառության կանխատեսելիությունը, բացառել կամայական որոշումների հավանականությունը՝ դատական ակտերի հիմքում ընկած պատճառաբանությունների հրապարակայնության պայմաններում բարձրացնելով դատարանների հաշվետվողականությունը:

Ի վերջո, վերը նշված բոլոր նկատառումներով հանդերձ, և բացի անհատի արդար դատաքննության սահմանադրական իրավունքից և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (Կոնվենցիայի 6-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի դեկտեմբերի 16-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի թիվ 2200 A

(XXI) բանաձևով հաստատված միջազգային դաշնագրի 14-րդ հոդված) ստանձնած պարտավորության մաս լինելուց, դատական ակտի պատճառաբանվածությունը նաև դատավորի մասնագիտական վարքագծին առաջադրվող և միջազգայնորեն ճանաչված սկզբունք է (տես՝ *ԵԴԽԽ Դատավորների մագնա կարտա* (Հիմնարար սկզբունքներ), 17/11/2010թ., կետ 16):

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով դատական ակտերի պատճառաբանված լինելու սահմանադրական հրամայականի վերաբերյալ նախկինում իր արտահայտած վերոհիշյալ դիրքորոշումները, շեշտում է, որ դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է համոզելու, որ դատական ակտի հիմքում ընկած են ոչ թե դատավորների անհատական կամ խմբակային մոտեցումներն ու շահերը, նրանց սուբյեկտիվ վերաբերմունքը վեճի լուծման որևէ տարբերակի նկատմամբ, այլ իրավունքը: Հետևաբար՝ ձախողելով տրամաբանական շղթայի մեջ արտացոլել վեճի լուծման համար նշանակություն ունեցող և կողմերի ներկայացրած փաստի կամ իրավունքի հարցերի վերաբերյալ փաստարկներն ընդունելու կամ մերժելու մասին դատարանի դատողությունների ընթացքը և դրանց եզրահանգումը դատական ակտում՝ վերջինս արդարադատություն իրականացնող հանրային իշխանության ատյանի ակտից վերածվում է այն հեղինակող դատավորի կողմից վեճի լուծման վերաբերյալ սուբյեկտիվ մոտեցման շարադրանքի՝ վտանգելով Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված՝ անհատի արդար դատաքննության իրավունքը:

5.4. Վերոնշյալի լույսի ներքո վերլուծելով վիճարկվող իրավական դրույթները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանցով Օրենսգրքի ընդհանուր՝ հիմնարար դրույթներում նախատեսված է դատական ակտերի պատճառաբանվածության պահանջը՝ որպես քաղաքացիական դատավարությունում դատական ակտին ներկայացվող ընդհանուր պահանջ: Մասնավորապես՝ Օրենսգրքի 6-րդ հոդվածով սույն սահմանադրաիրավական վեճին վերաբերելի մասով նախատեսված է, որ դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ օրենսգրքով (մաս 2), իսկ Օրենսգրքի 9-րդ հոդվածը մանրամասնում է դատական ակտին առաջադրվող պատճառաբանվածության պահանջի բովանդակությունը՝ սահմանելով, որ պատճառաբանվածության պահանջը ներառում

է ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները (մաս 1): Օրենսդիրը դատական ակտին ներկայացվող նշյալ պահանջները պարտադիր է համարել բոլոր ատյանների դատարանների համար: Այսինքն՝ ցանկացած ակտ կայացնելիս դատարանը կաշկանդված է դրա պատճառաբանվածությունն ապահովելու օրենսդրական պահանջի սկզբունքով և չի կարող դատական ակտ կայացնել առանց այն պատճառաբանելու, եթե Օրենսգրքով նախատեսված չէ պատճառաբանվածության ընդհանուր պահանջից բացառություն:

Օրենսգրքի՝ դատական ակտերին առաջադրվող պահանջները պարունակող մյուս դրույթներում դատական ակտերի բովանդակությանը վերաբերող հատուկ պահանջներով ավելի մանրամասնված է դատական ակտի պատճառաբանվածության ընդհանուր պահանջների բովանդակությունը (առաջին ատյանի դատարանի վճիռների մասով՝ Օրենսգրքի 192-րդ հոդվածի 4-րդ մաս, 196-րդ հոդվածի 1-ին մաս, և վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտերի մասով՝ Օրենսգրքի 381-րդ հոդվածի 5-րդ մաս, Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտերի մասով՝ 406-րդ հոդվածի 3-րդ մաս)՝ մատնանշելով այդ պահանջի պարտադիր բաղադրիչները: Միաժամանակ, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, այն վերադարձնելու, վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների նկատմամբ սահմանված է, որ դրանք պետք է համապատասխանեն Օրենսգրքի 200-րդ հոդվածի պահանջներին, որոնք, ի թիվս այլնի, նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանի կողմից առանձին դատական ակտի ձևով կայացվող որոշումների համար պարտադիր են համարում դրանցում ներառել «*հիմնավորումները, որոնցով դատարանը հանգել է եզրակացությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ»:* Այսինքն՝ Օրենսգրքի՝ սույն գործով դիմողի կողմից վիճարկվող, ինչպես նաև Օրենսգրքի որևէ այլ դրույթով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանված լինելու ընդհանուր կանոնից որևէ շեղում նախատեսված չէ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման նկատմամբ դատական ակտի պատճառաբանվածության պահանջի վերը նշված ընդհանուր նկատառումներից բացի, այն ուղղակիորեն կիրառելի է նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ այս որոշմամբ դատավարական կողմը, իր վճռաբեկ բողոքը Օրենսգրքով նախատեսված ընթացակարգային կանոններին համապատասխան ներկայացնելով, սպառում է իր իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը Հայաստանի Հանրապետության եռաստիճան դատական համակարգում՝ այլևս չունենալով իր իրավունքի ենթադրյալ խախտման դեմ դատական պաշտպանության այլ միջոց: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման նկատմամբ ուղղակիորեն տարածվում է դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքից բխող՝ պատճառաբանվածության պահանջը, որից որևէ շեղում օրենսդրի կողմից նախատեսված չէ:

Վերը նշվածի հետ մեկտեղ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Վճռաբեկ դատարանը, հանդես գալով Սահմանադրության 171-րդ հոդվածով նախատեսված սահմանադրական կարգավիճակով որպես Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյան, որի խնդիրը օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելը և մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելն է, նկատի ունենալով նաև, որ իր սահմանադրական լիազորությունների իրականացման բերումով առերեսվում է դատավարական բողոքների մեծ քանակի և եռաստիճան դատական համակարգում իր քննությանը ներկայացված իրավունքի և փաստի ամենաբարդ հարցերի քննությանը, պետք է բնականորեն ունենա իր կողմից կայացվող վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանության խորության և ծավալի որոշման լայն հայեցողություն, որը Վճռաբեկ դատարանին կապահովի իր սահմանադրական գործառույթների արդյունավետ իրականացում՝ հաշվի առնելով արդարադատության արդյունավետության

համար անհրաժեշտ գործոնների համադրումը:

Ամեն դեպքում, եռաստիճան դատական համակարգում նույնիսկ այլ դատական ատյանների համեմատ առանձին դատական ակտերի ձևով կայացվող որոշումների պատճառաբանվածությանն առաջադրվող պահանջի ապահովման առնչությամբ պատճառաբանությունների ծավալը և խորությունը որոշելու հարցում Վճռաբեկ դատարանին վերապահված լայն հայեցողությամբ հանդերձ, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշմամբ պատճառաբանությունների կամ դատողությունների կամ հիմնավորումների սոսկ եզրահանգումների արձանագրումը չի կարող համարվել դատական ակտի պատճառաբանություն, եթե դատական ակտում շարադրված չէ նման եզրահանգման համար հիմք ծառայած դատողությունների ընթացքը:

5.4. Կիրառելով Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշումը սույն սահմանադրաիրավական վեճի նկատմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում Դատական դեպարտամենտից պահանջված և ստացված թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործի ուսումնասիրությամբ պարզվում է, որ վիճարկվող դրույթները դիմողի նկատմամբ կիրառվել են այն մեկնաբանմամբ, որ Վճռաբեկ դատարանի 2021 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ՝ որպես դիմողի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքում, ի թիվս այլնի, նշված՝ (**1**) վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի որոշման կայացման և հրապարակման հարցում ենթադրյալ խախտումների և այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումների կիրառության, (**2**) վիճարկվող գործարքում դիմողի կողմից վկայակոչված իր շահագրգռության, (**3**) դիմողի ներկայացրած ապացույցների՝ իր պնդմամբ բավարարության (**4**) և խնդրո առարկա ապացույցի արժանահավատության, (**5**) վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից դիմողի ներկայացրած ապացույցներից դիմողի պնդմամբ ընտրողաբար մեկի գնահատման, միաժամանակ՝ մյուսների անտեսման, (**6**) վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից քննվող վերաքննիչ բողոքի սահմաններից դուրս գալու մասին փաստարկներին ի պատասխան՝ 2021 թվականի փետրվարի 19-ի որոշումը պարունակում է միայն դատա-

կան ակտի հնարավոր պատճառաբանության եզրահանգումների արձանագրումն առ այն, որ ներկայացված հիմնավորումները բավարար չեն եղել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հետևության հանգելու համար՝ առանց շարադրելու այդ եզրահանգման հիմքում ընկած դատողությունների ընթացքը: Այսինքն՝ առանց անդրադառնալու դիմողի կողմից վճռաբեկ բողոքում նույն բողոքը վարույթ ընդունելու համար նշված փաստարկների վերաբերելիության և բավարարության մասին Վճռաբեկ դատարանի կողմից 2021 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ կատարված եզրահանգումների իրավաչափությանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի նկատմամբ դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ Օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները կիրառվել են այն մեկնաբանությամբ, որ դատական ակտի պատճառաբանությունների փոխարեն այն պարունակում է միայն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի անբավարարության մասին եզրահանգում: Հետևաբար՝ դիմողի գործով Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ վիճարկվող իրավական դրույթները մեկնաբանվել և կիրառվել են Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ նախատեսված դիրքորոշումների հիման վրա տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանմամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու որոշումը՝ դրա հիմքում դրված եզրահանգման հետ մեկտեղ, պետք է պարունակի նաև դրան հանգեցրած պատճառաբանությունը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ

հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

1 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1628